ՀԱՍՏԱՏՈՒՄ Է՝
Խ. Աբովյանի անվան [illegible]
ուսումնական [illegible]
պրոռեկտոր [illegible]

Արձանագրություն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և

նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի № 6 նիստի

կայացած ս. թ. դեկտեմբերի 12-ին

Օրակարգ Լալա Հովհաննեսի Գրքիկյանի «Ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի բայերի արժույթը» թեմայով (ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ) թեկնածուական ատենախոսության քննարկում

Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ բ. գ. դ., պրոֆ. Վ. Համբարձումյան, բ. գ. դ., պրոֆ. Ա. Գալստյան, մ. գ. թ., պ.պ. Գ. Խալաթյան, բ. գ. թ., դոց. Ռ. Զուլֆայանը, բ. գ. թ., դոց. Ա. Յուզբաշյան, բ. գ. թ., դոց. Մ. Ղարիբյան, բ. գ. թ., դոց. Ս. Ամիրջանյան, բ. գ. թ., դոց. Մ. Սողոմոնյան, բ. գ. թ., դոց. Է. Ավետիսյան, մ. գ. թ., դոց. Ս. Թորգոմյանը, բ. գ. թ. Անահիտ Հարությունյանը, դասախոս Ա. Ավագյանը.

Լսեցին Իրրև առաջատար կազմակերպություն հայոց լեզվի ամբիոնի բննարկմանը ներկայացված Լ. Հ. Գրքիկյանի «Ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի բայերի արժույթը» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ բ. գ. թ., դոց. Ռ. Զուլֆայանի և բ. գ. թ., դոց. Ս. Ղարիբյանի զրավոր կարծիքները։

Մասնավորապես նշվեց հետևյալը.

Ժամանակակից լեզվաբանությունը կարևորում է արժույթի գաղափարը, որը հանգում է ստորադրյալի կապակցելիությանը նախադասության այլ անդամների հետ

Այսպիսով, արժույթի ուսումնասիրությունը բառերի կապակցական հնարավորությունների ուսումնասիրությունն է, որն էլ հաղորդակցական գործընթացում խոսքը ճիշտ կառուցելու նախապայման է։ Սույն ատենախոսության հեղինակը փորձ է արել քննելու և գիտականորեն արժևորելու ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցական հնարավորությունները։

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, ունի օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկ։

Ներածության մեջ հեղինակը անդրադարձ է կատարում արժույթի հասկացությանը, ներկայացվում են օտարազգի և հայ լեզվաբանների տեսակետները, սահմանվում են առաջադիր խնդիրները։

Առաջին գլխում քննվում է ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի բայերի դիմավոր ձևերին բնորոշ արժույթը։

ա) Անդրադարձ է կատարվում չեզոք սեռի բայերի ենթակաառությանը, առանձնացվում են տարբեր դասային խմբերի զոյականներ (ենթականեր), ինչպես նաև չեզոք սեռի բայերի դասային խմբեր։ Յուրաքանչյուր խմբի բայերի կապակցելիությունը ներկայացվում է հայ նոր գրականության բնագրերից քաղված օրինակներով, տրվում են բայերի բառակազմական մասնակաղապարները։

բ) Չեզոք սեռի բայերի ստորոգառության դեպքում համեմատություն է անցկացվում ենթակաառու և կոչականառու չեզոք սեռի դիմավոր բայերի և ստորոգառու դիմավոր բայերի արտահայտությունների միջև և եզրակացնում, որ ստորոգառու չեզոք սեռի դիմավոր բայերն ունեն կապակցելիության լայն հնարավորություն, քանի որ կարող են արտահայտվել ինչպես թեր հոլովաձևերով, այնպես էլ կապային կառույցներով, ինչպես նաև չեզոք սեռի բայերը ստորոգելի կարող են սահանալ ոչ միայն համաձայնության, այլև կառավարման և առդրության եղանակներով։

գ) Չեզոք սեռի բայերի կոչականառության դեպքում ատենախոսը նկատում է, որ նման բայերը կոչականառության տեսանկյունից բաժանվում են երկու խմբի

կոչականառու և կոչական չտուացող։ Եթե անձնանիշ ենթականառու չեզոք սեռի բայերը անդիմանանիմանափակ են, կոչականառության դեպքում նկատվում է դիմանանիմանափակություն։ Կոչական ստանում են միայն երկրորդ դիմային ձևերը։

Երկրորդ գլխում քննվում է ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի դիմավոր և անդեմ բայաձևերին բնորոշ արժույթը։ Հեղինակը նկատում է, որ, ի տարբերություն միայն դիմավոր ձևերին բնորոշ արժույթին, չեզոք սեռի դիմավոր և անդեմ բայաձևերին բնորոշ են խնդրառությունն ու պարագաառությունը։ Ժամանակակից հայերենի խնդրառու չեզոք սեռի բայերի և խնդիրների կապակցումը կատարվում է ըստ կառավարման եղանակի, որն ունի երկու դրսևորում՝ անմիջական և միջնորդավորված կամ կապային։

Հեղինակը մասնավանդ քննություն է ենթարկել միարժույթ և երկարժույթ չեզոք սեռի բայերի խնդրառությունն անմիջական և միջնորդավորված կառավարման եղանակով։

Քննվում է նաև չեզոք սեռի բայերի պարագաառությունը։ Նշվում է, որ չեզոք սեռի մի շարք բայեր, պայմանավորված բայիմաստով, առանձնանում են պարտադիր պարագաառությամբ, որն իրականանում է ուժեղ կառավարման եղանակով։ Հեղինակն անդրադարձ է կատարում պարագաառությամբ միարժույթ և երկարժույթ չեզոք սեռի բայերին։ Քննության են ենթարկվում անմիջական կառավարմամբ և միջնորդական կառավարմամբ միարժույթ և երկարժույթ պարագաառությունները։ Եզրակացությունների մեջ ամփոփվում են կատարված աշխատանքի արդյունքները։

Սույն հետազոտությունը արժեքավոր է ուսումնասիրվող նյութի համակողմանի իմացությամբ, աշխատանքի բովանդակության և առաջադիր խնդիրների համապատասխանությամբ, նյութին առնչվող աղբյուրներին քաջածանոթ լինելով, վերլուծական մտածողություն դրսևորելու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությամբ։

Աշխատանքի վերջում հեղինակն ընդհանրացրել է նյութի քննության ընթացքում իր կատարած հետևությունները՝ նշելով, որ հայերենում «արժույթ» հասկացությունը

[illegible] է ենթական. ստորոգյալի. խնդրի. պարագայի և կոչականի առումներին. որոնք տարբեր զուգորդումներով են հանդես գալիս խոսքում. ժամանակակից հայերենում ենթականությունը. ստորոգությունը. կոչականությունը հատուկ են [illegible] սեռի միայն դիմավոր բայերին. իսկ խնդրությունը և պարագայությունը հիշյալ բայերի և դիմավոր. և անդեմ ձևերին: Ընդ որում՝ ենթականու և կոչականու դիմավոր բայերի թիվը անհամեմատ մեծ է. մինչդեռ ստորոգաու բայերի բանակը երկու տասնյակից չի անցնում: Ենթականության ստորոգության. կոչականության տեսանկյունից ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը միարժույթ են. իսկ խնդրության և պարագայության տեսանկյունից՝ միարժույթ և բազմարժույթ:

Աշխատանքը հարուստ է հայ նոր գրականության բնագրերից և Արևելահայերենի ազգային կորպուսից (ԱՐԵԿԱԿ) քաղված օրինակներով. որոնք ընտրված են լեզվական իրողությանը համապատասխան:

Ատենախոսը ուսումնասիրության նյութ է դարձրել չեզոք սեռի բայերի կապակցելիությունը իմաստաբանական և քերականական մակարդակներում կատարելով դասանշային դասակարգում: Ըստ այդմ բացահայտված գիտական նոր տվյալներն ու օրինաչափությունները նպաստում են շարահյուսական բազմաթիվ հարցերի հարստացմանը: Խնդրո առարկա հարցի համապատասխան լուծումները բացահայտում են ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցելիությունը ըստ արժույթի և դասանշության:

Ատենախոսությունն ունի տեսական և գործնական մեծ նշանակություն. հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել քերականության ուսուցման դասընթացներում. ինչպես. նաև ուսումնական ձեռնարկներ. ուղեցույցներ և դասագրքեր կազմելիս:

Ատենախոսը քաջածանոթ է մասնագիտական գրականությանը և ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է լեզվական նյութի դիտարկումները տարբեր լեզվաբանների կողմից: Աշխատանքը կատարված է գիտական պատշաճ

մակարդակով. պատասխանատվության զգացումով. Հեղինակը փորձել է [illegible]
գիտություններ հիմնավորել փաստական հարուստ նյութով. եզրահանգումները
ամրապնդել համոզիչ վերլուծություններով. Հետազոտության արդյունքները [illegible]
թեմայի արդիականությունից, նպատակից և խնդիրներից:

Էջխատակի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ չկան. այնուհանդերձ,
անհրաժեշտ է նշել որոշ նկատառումներ.

1) Ենթակաառու չեզոք սեռի բայերի մասին խոսելով հեղինակը մի դեպքում
սահմանում է հոգնակի, հավաքական կամ բազմակի *ենթականեր* պահանջող բայեր (էջ 16), մյուս դեպքում միայն մեկ *առարկայի* կողմից կատարվող գործողություն
տվող բայեր (էջ 17): Կարծում ենք ճիշտ կլիներ սահմանումներում խոսել ենթակաների կատարած գործողությունների մասին, քանի որ խոսքը վերաբերում է ենթակաառու չեզոք սեռի բայերին:

2) Առանձնացնելով միայն անձնանիշ ենթականերին կապակցվող չեզոք սեռի բայերի ցույց տված գործողությունների իմաստային խմբերը հեղինակը մի դեպքում տալիս է դրանց բառակազմական-բայակազմական նկարագրերը (1.4, 1.6, 1.8, 1.9, 1.10, 1.11, 1.12, 1.14, 1.15, 1.16), մյուս դեպքում՝ ոչ (1.1, 1.2, 1.3, 1.5, 1.7, 1.12): Կարծում ենք՝ աշխատանքը կշահեր, եթե այս հարցում հեղինակը հետևողական լիներ:

3) Ատենախոսության 21-րդ էջում հեղինակը գրում է, որ «փոդոտել» բառը բառարաններում բացակայում է, սակայն բառը չի բացակայում: Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի 513-րդ էջում բառը բացատրված է 1. *մոլորելով արյուն թափել, 2. փոքր պարանոցը կտրել: խեղդել:* Բառը նույն բացատրությամբ կա նաև Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (էջ 1532): Բացակայում է ոչ թե բառը, այլ այդ բառին ժողովրդախոսակցական լեզվում տրված նոր իմաստը:

4) «*Սոցիալական կամ քաղաքական վիճակով պայմանավորված գործողություններ» (1.8)* բայիմաստային խմբում հեղինակը զետեղել է *սրամտել* բայը: Կարծում ենք՝ *սրամտել* բառը սոցիալական կամ քաղաքական վիճակով պայմանավորված

որևէ գործողություն ցույց չի տալիս նույնը վերաբերում է. *յուրաքանչյուրին* [illegible] պաշտպանություն դառնալ) բային, որը գտնվելիս է. «Ալտոյմունին [illegible] թյունը, նախասիրությանը, հակումին բնորոշ գործողություններ» բայիմաստ [illegible] իմաստում.

5) Ենթակայական չեզոք սեռի բայերի դասային իմաստները ներկայացնում [illegible] ստանդարտ թվարկված բայերի մեջ (*անկանակել, արյունակել, դալակ* [illegible] *խոտակցել, վշտակցել* և այլն) առանձնանում է *կից (կց)* բայանիշով, որ այն հանդես է գալիս որպես բաղադրող հիմք, մինչդեռ այն սերող հիմք չունի:

6) 90-րդ էջում բացառական հոլովով անձնանիշ գոյականներին վերաբերող օրինակները բերված են դերանուններով:

7) 54-րդ էջում հեղինակը, առաջնորդվելով Վ. Առաքելյանի մոտեցմամբ, նշում է, որ գոյականի ներգոյական հոլովի մի շարք կիրառություններ պետք է դիտել սեղի պարագա, ոչ թե ստորոգելի, ինչպես «Նույնն էլ պատմվածքում է», «Քո պետության սահմաններում է»: Կարծում ենք՝ նույն տեսակետը պետք է հայտնվեր նաև բացառական հոլովի որոշ կիրառությունների մասին, ինչպես՝ «Շինությունները թրծած աղյուսից են», «Ցիքիլը սև մորթուց էր»:

8) Կան որոշ անճշտություններ «գոյական + չեզոք սեռի ստորոգաում բայ» տրական հոլովով մասնակաղապարում: Խանութը *կոշկակարի է* (էջ 51) կառույցում *կոշկակարի* բառն արտահայտված է սեռական հոլովով:

9) Ստորոգաության որոշ մասնակաղապարներում անուղղակի խնդիրներն ընդհանուր են նշված, մինչդեռ կան ընդհանրական անդամի արժեք ունեցող խնդիրներ, և նախընտրելի է յուրաքանչյուր օրինակի մոտ նշվեր տվյալ անդամի շարահյուսական գործառույթը (էջեր 109, 115):

10) Անմիջական կառավարմամբ միարժույթ պարագաառության մեջ նշված են միայն տրական, հայցական և ներգոյական հոլովներով դեպքերը (էջ 123), բաց են թողնված բացառական, գործիական հոլովներով արտահայտվածները, իսկ

անմիջական կառավարմամբ էոարժույթ պարապարության մեջ կան [illegible]
անհայտություններ «Նախիրն անկատելիորեն մոտենում էր *գետակին*» կատարյալ
ընդգծվածը ոչ թե տեղի պարապա է, այլ հանգման խնդիր (էջ 127)։ Իրանից նեթ[illegible]
սահանկող չեղոք սեռի բայեր են *կարկաչել, անդրնոտել, ոտքիտնել, ոտքատել, գլ[illegible]*
ոճպատնեալ և այլն

Նշված դիտարկումները չեն սահմանում գիտական պատշաճ չափանիշներ[illegible]
դատարկած այս աշխատանքի արժեքը։ Ի վերջ գիտական և տեսական աշխատանքներ
թեմայի է խորությամբ, փաստագրական նյութ տալիս է [illegible]
[illegible]թյունները հումքից են։ Հեղինակները և հրատարակված հոդվածները
արտացոլում են ատենախոսության հիմնահարցերը։

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ Հալա Հովհաննեսի [illegible]
«Ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի բայերի սարքույթ»
[illegible] լիովին բավարարում է բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար առաջադրվող [illegible]
պահանջները։

Որոշեցին։ Հալա Հովհաննեսի Գրիգորյանի «Ժամանակակից արևելահայերենի
չեզոք սեռի բայերի սարքույթ» ատենախոսությունը ներկայացնել հրապարակային
պաշտպանության հեղինակին բանասիրական գիտությունների թեկնածուի
աստիճան շնորհելու համար։ այն համապատասխանում է ՀՀ ԲԿԳՍ-ի կողմից
գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և «Լեզու
-Հայոց լեզու» մասնագիտության բաժնին